ՀՀ ԳԱԱ ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԶԱՔԱՐՅԱՆ ՀՌԻՓՍԻՄԵ ԱՐԱՅԻ

ԱՎԱՆԴՈՒՅԹԻ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԵՆՐԻԿ ԷԴՈՅԱՆԻ ՊՈԵԶԻԱՅՈՒՄ

Ժ. 01.02 - «Նորագույն շրջանի հայ գրականություն» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2022

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանի հայ բանասիրության ֆակուլտետի գիտական խորհրդում:

Գիտական ղեկավար՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Աղաբեկյան Կիմ Բագրատի

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Գիլավյան Մարտին Գարեգինի

բանասիրական գիտությունների թեկնածու
Մնացականյան Դիանա Էդուարդի

Առաջատար կազմակերպություն՝ **Երևանի Խաչատուր Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարան**

Պաշտպանությունը կայանալու է 2022 թ. ապրիլի 29-ին, ժամը 12:30-ին, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում գործող ԲՈԿ-ի՝ Գրականագիտության 003 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ Երևան, Գրիգոր Լուսավորչի 15:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2022 թ. մարտի 15-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար՝ բանասիրական
գիտությունների թեկնածու **Ս. Ա. Մարգարյան**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության նյութը 1960-ականներին ասպարեզ եկած հայ բանաստեղծ Հենրիկ Էդոյանի պոեզիայում ավանդույթի և նորարարության խնդիրների առանձնահատկությունների ուսումնասիրությունն է, որը թույլ կտա մի կողմից բացահայտել էդոյանական արվեստի բազմաձևությունը, յուրահատկությունը, թեմատիկայի առանձնահատկությունը՝ ի հայտ բերելով այդ բազմաձևության հակառակ կողմում նշմարվող ներքին բովանդակ հարստությունը, որը, ինչպես թեմատիկայի, այնպես էլ բանաստեղծական ձևի, ոճի և այլնի առումով բացում է բանաստեղծական նոր տարածություն, մյուս կողմից՝ ավելի խորքային ու օբյեկտիվ բնորոշումներ տալ 1960-1970-ական թվականներին ասպարեզ եկած պոեզիայի ստեղծման հրամայականի ու ձևավորման գործընթացի, շարժման ուղղվածության և զարգացման բնույթի մասին՝ ընդհանրացնելով գրական պատմաշրջանի գեղարվեստական-գաղափարական որոնումների շրջափոխումը և վերաճշգրտելով նորագույն գրականության տիպաբանական առանձնահատկությունների մասին ընդհանուր պատկերացումները:

ԹԵՄԱՅԻ ՆՈՐՈՒՅԹԸ, ՄՇԱԿՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Չնայած Հ. Էդոյանի պոեզիայի որոշ առանձնահատկությունների առանձին հոդվածներով անդրադարձել են Գ. Էմինը, Ա. Թոփչյանը, Զ. Ավետիսյանը, Ժ. Քալանթարյանը, Թ. Խաչատրյանը, Ն. Ղազարյանը, Ս. Աբրահամյանը, Պ. Դեմիրճյանը և ուրիշներ, ըստ անհրաժեշտության՝ Հ. Մուսայելյանը, Ս. Գրիգորյանը, Ա. Ջրբաշյանը, Դ. Մնացականյանը և այլք, բանաստեղծի ստեղծագործությունները արտահայտիչ խորաթափանցությամբ արժևորվել են Ֆ. Բախչինյանի կողմից, այնուամենայնիվ Հ. Էդոյանի բանարվեստում առկա բազմաթիվ իրողություններ դեռևս համապարփակ ուսումնասիրության չեն արժանացել կամ պոեզիայի ու գիտության նորագույն նվաճումների հրամայականով կարիք ունեն հավելյալ լրացումների, ճշգրտումների: Կարելի է ասել՝ մինչ օրս չկա Հ. Էդոյանի պոետիկայի համակարգված, ընդհանրական ուսումնասիրություն, որը կփորձի սահմանել նրա տեղն ու դերը նորագույն գրականության պատմության զարգացման ընթացքում: Մեր ատենախոսությունն այս առումով առաջին փորձն է, որի առաջադիր նպատակն է սահմանափակ ծավալի շրջանակում փորձել հնարավորինս դիտարկել, բնագրային վերլուծություններով բացահայտել Հ. Էդոյանի պոետիկայի էական առանձնահատկություններն ու բանաստեղծական նորարարության գեղարվեստական վերամարմնավորումը, նրանց գեղագիտական, բարոյահոգեբանական նշանակությունը:

Այսպիսով, աշխատությունը թե՛ ծավալով, թե՛ բազմակողմ հարցադրումներով առաջին փորձն է. հետևապես, այս սեղմ ծավալում անհնար է ամբողջությամբ դիտարկել, երևան հանել Հ. Էդոյանի բանաստեղծական աշխարհի բոլոր գաղտնիքները: Այն գրականագիտության համար հարուստ

նյութ է, որն ամեն անգամ պահանջելու է նոր մոտեցումներ, գիտության զարգացմանը զուգընթաց՝ նաև գիտական նոր մեթոդներ ու սկզբունքներ:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ սույն ատենախոսությամբ առաջին անգամ փորձ է արվում համակողմանի և համապարփակ վերլուծությամբ սահմանելու Հ. Էդոյանի պոեզիայի նորարարական բնույթը, նրա բանաստեղծական տեքստի մակրոտեքստերի և միկրոտեքստերի կառուցվածքային առանձնահատկություններն արդիական տեսական խնդիրների մակարդակում:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ, ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ուսումնասիրության առարկան բանաստեղծի առաջին՝ «Անդրադարձումներ» (1977) ժողովածուից մինչև վերջին՝ «Էլեգիկ մտորումներ» (2019) ժողովածուներում ամփոփված բանաստեղծություններն են, որոնք աչքի են ընկնում բանաստեղծական խոսքի ոճական երանգավորումներով, կոմպոզիցիոն յուրահատուկ կառուցվածքով, պոետական ներդաշնակ ու ճշմարիտ զգացողությամբ, բովանդակային հարստությամբ, հնչյունական ոճավորմամբ, յուրահատուկ երաժշտականությամբ, բարձրագույն էության ու ներըմբռնումների գեղարվեստական վերաիմաստավորմամբ, ավանդական ու նորարարական գեղարվեստական տարբերակվող ձևերի յուրահատուկ զուգորդությամբ:

Մեր ուսումնասիրության **նպատակն է** ընդհանուր համապատկերի մեջ ամենատարբեր՝ կրոնական, փիլիսոփայական, սոցիալ-հոգեբանական դիտանկյուններից իմաստավորել, բանաստեղծական նյութի ամբողջական կամ համապատասխան մեջբերված հատվածի բնագրային վերլուծություններով բացահայտել ստեղծագործությունների կառուցվածքային, կոմպոզիցիոն, ձևի ու բովանդակության, մոտիվային, թեմատիկ յուրահատկությունները, պատկերավորման համակարգը՝ ընդգծելով ավանդականն ու նորարարականը, ինչպես նաև համեմատելով Հ. Էդոյանի բանարվեստն այլ ստեղծագործողների բանաստեղծական առանձին պատկերների կամ ամբողջական ստեղծագործությունների հետ:

Առաջադրված նպատակներն իրագործելու համար սահմանվել են հետևյալ **խնդիրները**՝

1. Հ. Էդոյանի պոեզիայի օրինակով հնարավորինս բացահայտել արդի պոեզիայի զարգացման պատմական ու փիլիսոփայական ընթացքը,
2. պոեզիայի զարգացման համապատկերում բնագրային մեջբերումներով, առանձին և համեմատական վերլուծություններով ակներև դարձնել էդոյանական արվեստում ավանդականի ու նորարարականի վերաիմաստավորման բնույթը,
3. բանաստեղծական ձևի ու բովանդակության տիրույթում ընդգծել պոետի նորարարական որոնումների ինքնատիպ ընթացքը,

4. ավանդականի ու նորարարականի հարաբերակցության համապատկերում համեմատական վերլուծությամբ բացահայտել Էդոյանական արվեստի գեղարվեստական ոճի առանձնահատկությունները,
5. սահմանել Հ. Էդոյանի տեղն ու դերը արդի հայ բանաստեղծական մտքի ձևավորման, զարգացման գործընթացում:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ

Հ. Էդոյանի բանաստեղծական աշխարհը դիտարկվում է որպես ամբողջական տեքստ, մեկ ամբողջական հյուսվածք, որը հետազոտության իրականացման մեթոդաբանության առումով ենթադրում է պոետիկական սկզբունքների համընդհանրական դիտարկման, հետազոտական օբյեկտի համադրական սկզբունքը, հետևապես բանաստեղծություններն ընտրված են ոչ թե ժամանակագրական սկզբունքով՝ շեշտելով այս կամ այն ժամանակահատվածում կամ ժողովածուում ներառված բանաստեղծությունների զարգացման սկզբունքային տարբերությունները, այլ համակարգային-ամբողջական, համեմատական-տիպաբանական, ինչպես նաև վերլուծական-համատեքստաբանական, տեսական-մեթոդաբանական, մշակութային-պատմական, մի-ֆաքննադատության մեթոդների կիրառմամբ փորձել ենք ընդգծել Հ. Էդոյանի բանաստեղծական արվեստի ընդհանրական (ավանդական) և տարբերակվող (նորարարական) առանձնահատկությունները:

Տեսական ու մեթոդաբանական առումով հետազոտության համար հիմք են հանդիսացել նաև հայ և այլազգի հետազոտողների հնավանդ ու նորագույն ուսումնասիրությունները, հայեցակարգային դիրքորոշումները:

Հ. Էդոյանի գրականագիտական-տեսական աշխատությունները նրա բանաստեղծությունների լրացում-մեկնաբանումներն են: Վերջիններս էլ իրենց հերթին, որոշակի առումներով, կարելի է ասել, դառնում են հոդվածների թեմատիկ-գաղափարական սկզբնաղբյուրները: Տրամաբանորեն բանաստեղծի պոետական աշխարհը հարկ է դիտարկել՝ հիմքում ունենալով նաև նրա գրականագիտական աշխատությունները և ըստ անհրաժեշտության կատարելով մեջբերումներ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության տեսական և կրառական նշանակությունը նրանում է, որ ստացված արդյունքները կարող են գործածվել արդի հայ գրականության ուսումնասիրության ժամանակ, բուհական դասընթացների, սեմինարների, դասախոսությունների ընթացքում:

Այն կարող է կիրառելի լինել ինչպես Հ. Էդոյանի, այնպես էլ արդի հայ բանաստեղծների պոեզիայի հետագա հետազոտողների համար:

Ատենախոսությունն իր գիտատեսական նշանակությամբ կարող է օգտակար լինել նաև գրականության տեսաբանների, մշակութաբանների, փիլիսոփաների ու հոգեբանների համար:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության առանձին մասեր հոդվածների տեսքով հրատարակվել են ՀՀ ԲՈԿ-ի կանոնադրությամբ հաստատված գիտական պարբերականներում (տպագրվել է թեմային վերաբերող 9 հոդված (տե՛ս հրապարակումների ցանկը սեղմագրի վերջում)):

Ատենախոսությունը քննարկվել է ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի հայ նորագույն գրականության ամբիոնի 2021 թ. հունիսի 30-ին կայացած թիվ 9 նիստում, ստացել դրական եզրակացություն և երաշխավորվել հրապարակային պաշտպանության:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԾԱՎԱԼԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից՝ համապատասխան ենթաբաժիններով, եզրակացություններից ու օգտագործված գրականության ցանկից, որը ներառում է 248 սկզբնաղբյուր: Ատենախոսության ամբողջական ծավալը 203 համակարգչային էջ է (հիմնական տեքստն առանց հավելվածների՝ 189 էջ):

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներածության մեջ սահմանվում է ատենախոսության գլխավոր նպատակն ու խնդիրները, նրա արդիականությունը, գիտական նորույթն ու կարևորությունը, թեմայի մշակվածության աստիճանն ու հետազոտության մեթոդաբանական հիմքերը, այդ թվում նաև՝ ատենախոսության կառուցվածքը:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Առաջին գլուխն ունի «**Հ. Էդոյանի բանաստեղծական արվեստն ու 20-րդ դարի 1960-1970-ական թվականների գրական տեղաշարժերը: Ավանդույթներ և նորարարություններ**» վերնագիրը, որի առաջին ենթավերնագրում՝ «*Գրական գործընթացը Հայաստանում 20-րդ դարի 1960-1970-ական թվականներին և նրա ազդեցությունը Հ. Էդոյանի ստեղծագործական անհատականության ձևավորման վրա*», քննության են առնված Հայաստանում 20-րդ դարի երկրորդ կեսին՝ 1960-1970-ական թվականներին ծավալվող գրական գործընթացները: Ենթագլուխը բացվում է 1960-1980-ական թթ. արդիական դարձած «գրական

գործընթաց» եզրույթի վերաիմաստավորմամբ, այդ հասկացության կարևորագույն սահմանումներին անդրադարձով: Ժամանակագրական առումով արդի գրական գործընթացն ընդգրկում է 20-րդ դարի 1960-ական թվականներից մինչև 1980-ականների կեսերն ու նոր հազարամյակի սկիզբը: Հենց այդ ժամանակաշրջանում է գրականությունը վերընթաց դրսևորել իր նոր, տարորակ ու տարաձև բնույթը, ինչն էլ տեղիք է տվել գրականագիտական ու գրաքննադատական բուռն տարակարծիք բանավեճերի, դիտարկումների ու քննարկումների, որոնց համար արդյունավետ հարթակ է դարձել գրական մամուլը, ինչպիսին, օրինակ, «Գրական թերթն» է, «Սովետական գրականությունը», «Գարունը» և այլ թերթեր ու ամսագրեր: Այդ համապատկերում փորձել ենք ընդհանուր հատկանիշներով ընդգծել Հ. Էդոյանի գրականագիտական դիրքորոշումներն ու բանաստեղծական արվեստի սկզբնավորման ուղին:

«*Պոետական իրավիճակը 1960-1970-ական թվականներին և քնարական հերոսի խնդիրները*», «*Ազատ բանաստեղծության (վերլիբր) ֆենոմենը: Ռիթմական և ինտոնացիոն առանձնահատկությունները*», ««*Քաղաքային տեքստն» ու նրա իմաստավորման առանձնահատկությունները*» ենթավերնագրերում քննության առարկա ենք դարձրել բանաստեղծական ձևի, ոճի, թեմատիկայի ու պոետիկայի էական առանձնահատկությունները՝ ընդգծելով ավանդական և նորարարական դրսևորումները, հաշվի առնելով պատմական համատեքստը, տեսական հիմքերը:

«*Պոետական իրավիճակը 1960-1970-ական թվականներին և քնարական հերոսի խնդիրները*» ենթագլխում տեսական համակողմանի հիմնավորումներով ներկայացրել ենք քնարական «հերոս» և քնարական «ես» հասկացությունների փոխառնչություններն ու տարբերությունները, վերջիններիս ձևավորման ու զարգացման դրդապատճառները 20-րդ դարակեսից մինչև 21-րդ դարասկիզբ ընկած ժամանակահատվածում: Այս հիմքերի վրա ի հայտ են բերվել Էդոյանական քնարական «ես»-ի դրսևորման ավանդական և նորարական կողմերը, որը՝ որպես հեղինակային գիտակցության գեղարվեստական մարմնավորման միջոց, գեղարվեստական-հոգեբանական նոր որակ է արդի հայ բանաստեղծության մեջ:

Հարկ է նկատել, որ 20-րդ դարավերջին ու 21-րդ դարասկզբին քնարական աշխարհն ու քնարական հերոսը որոշակի փոփոխության ենթարկվեցին: Առավելապես նկատելի են 1950-1960-ական թթ. և 1970-ական թթ. վերջի պոեզիայի միջև տարբերությունները: 1950-1960-ականների պոեզիան նշանավորվում էր սեփական ժողովրդի ողբերգական անցյալի վերապրումով, ազգային հոգևոր արժեքների վերաիմաստավորմամբ, հավերժական ու կենսական խնդիրների բանաստեղծականացմամբ՝ առաջին պլան մղելով հատկապես մարդ-բնություն-հայրենիք թեմաները, որոնք արտահայտվում էին դասական բանաստեղծական ձևերով: Պատկերն այլ է 1960-1980-ական թվականներին: Այդ շրջանում բանաստեղծական մտքի «ծանրության կենտրոնը» կյանքի ու կյանքում մարդու դերի իմաստավորման մասին ողբերգական մտորումներն են: Քնարական հերոսն ինչպես ազգային հոգևոր արժեքների վերաիմաստավորողն է (Ռ. Դավոյան, Վ. Հակոբյան և ուրիշներ), այնպես էլ քաոսային իրականության

մեջ սեփական «ես»-ի փնտրտուքների ճանապարհին անձնական ու համամարդկային արժեքների վերաիմաստավորողը՝ դրսևորվելով անհանգ բանաստեղծական ձևերով, շատ դեպքերում դասականի ու նորի յուրօրինակ համադրումներով (Է. Միլիտոնյան):

Կամքի ազատության թյուրըմբռնումն ու առանց Աստծու ապրելու «հնարավորությունը» պոստմոդեռնիստական գիտակցությանը բերում են անթույլատրելի պարադոքսալության. պոստմոդեռնիստական քնարական հերոսը մշտապես դիմում է Աստծուն, ձգտում Բացարձակին, բայց միևնույն ժամանակ կանգնում Աստծո կարծեցյալ «ճշմարտացիության» գոյութենապաշտական (էքզիստենցիալիստական) հարցի առջև: Ի տարբերություն պոստմոդեռնիստական հերոսի՝ Հ. Էդոյանի քնարական հերոսը, «ես»-ի միջոցով ճանաչելով աշխարհը, դուրս է գալիս էգոյի շրջանակներից, դառնում անհատականություն, որն առավելագույնս է ճանաչում ինքն իրեն ու շրջապատող աշխարհը, գիտակցում իր պատասխանատվությունն աշխարհում տեղի ունեցող ամեն ինչի համար: Ազատվելով սուբյեկտիվությունից՝ արդյունքում «ես»-ը դառնում է ընդհանրացված անհատ, հավաքական կերպար՝ ինչ-որ մի մակարդակում, սակայն, պահպանելով նաև անհատականությունն ու եզակիությունը:

«*Ազատ բանաստեղծության (վերլիբր) ֆենոմենը: Ռիթմական և ինտոնացիոն առանձնահատկությունները*» ենթագլխում փորձ է արվում համակարգված կերպով ներկայացնելու Հ. Էդոյանի՝ ազատ բանաստեղծության ձևերով գրված ստեղծագործությունների առանձնահատկությունները, նրա ավանդական ու նորարարական կողմերը: Ազատ բանաստեղծության ֆենոմենին մենք մոտենում ենք ակունքներից, ներկայացնում նրա առանձնահատկությունները, ձևավորման ու զարգացման ուղին՝ մինչև 1960-1970-ական թվականները, երբ երիտասարդ բանաստեղծական սերունդը, վերագնահատելով անցյալը, նոր ժամանակի թելադրանքով փորձում է գեղագիտական նորագույն ձևերով դրսևորել գեղարվեստական նոր տրամադրությունների բնական ընթացքը՝ հայկական վանկային ոտանավորի ավանդական չափերը փոխարինելով ազատ բանաստեղծության չափով: Նորը նոր ձևով արտահայտելու միտումը, սակայն, բուռն քննարկումների ու բանավեճերի տեղիք տվեց:

Հայտնի է, որ Հ. Էդոյանի բանաստեղծական առաջին շրջանի որոշ բանաստեղծությունների հատուկ է գրական ավանդույթով հաստատված դասական բանաստեղծական ձևը՝ տաղաչափական դրսևորումներով, ռոմանտիկական տրամադրություններով: Վերջինը, սակայն, չի ենթադրում ռոմանտիզմի ու իր հասկացությունների՝ որպես ոճի ընդունում կամ ընկալում, այլ ենթադրում է ընդհանրապես ոճական որոնումների ճանապարհին որոշակի նրբերանգներ, տերյանական տրամադրություններ՝ դրսևորված ռոմանտիկական մոտիվներով: Բանաստեղծական աշխարհընկալման այդ սկզբնաղբյուրները հարկ է որոնել բացառապես գրողի առաջին շրջանի բանաստեղծություններում:

Հակվելով բանաստեղծական նորագույն ձևին՝ բանաստեղծը զերծ չի մնում նորագույն միտումների ներազդեցությունից, ինչը պայմանավորված է նաև դարաշրջանի ընդհանուր մթնոլորտով: Հ. Էդոյանը, պոեզիան ընկալելով «ոչ թե «գեղեցիկ սուտ», ինչպես ասել են ժամանակին, այլ «ճշգրիտ գիտություն»,

կեցության բարձրագույն ձև» (ընդգծումը մերն է – Հ. Զ.)[1], տրամաբանորեն պետք է ընտրեր ազատ բանաստեղծության՝ վերլիբրի տեսակը, մասնավորապես «երկար» տեսակը՝ երկարաշունչ տողերով, նախադասություններով՝ չնայած նրան, որ երբեմն էլ հանդիպում ենք ճիշտ հակառակ երևույթին, երբ բանաստեղծությունն ունի երկու կամ երեք տող (օրինակ՝ «Լապտերի լույսի տակ» բանաստեղծությունը, որն ընդամենը կազմված է երեք տողից. «*Կանաչ սիրտ, մի ոսկյա // անձրևի պարտեզ: // Միասին: Եվ մենակ»*[2]): Բանաստեղծական կառուցվածքի այդ նոր ձևին հատուկ է ազատ բանաստեղծության «արձակացված», առավել տեղին բնորոշմամբ՝ «նարատիվ» (պատումային) վերլիբր ենթատեսակը (Բ. Վ. Տոմաշևսկի)[3]: Այն հատկանշվում է տրամաբանականությամբ, պատկերավորությամբ, ամբողջական սյուժեով, հանգամանորեն բնութագրվող կերպարներով ու մտածողության ինդուկտիվ (մակածական) բնույթով (Յու. Օրլիցկի): Այս նորարարությունն առաջին անգամ հայ իրականության մեջ նկատելի է հատկապես Հ. Էդոյանի պոեզիայում, ինչի վառ օրինակը նրա «Ճանապարհի երգեր» շարքի բանաստեղծություններն են՝ գրված առաջին դեմքով և քնարական հերոս դարձած բիբլիական կերպարների անունից ու նրանց լեզվով: Բանաստեղծություններն առավել տպավորիչ են դարձնում սուրբգրային լեզուն, ինչպես նաև տեքստի «անսովոր» «երկարությունը»: Առաջին հայացքից թվում է՝ նորարարական բանաստեղծական ձևի ենթատեսակով արարված այդ բանաստեղծությունները հեռու են բանաստեղծականությունից, ինչ-որ մի մակարդակում նաև մոտենում են պոեմի սկզբունքներին: Շատ դեպքերում էլ հարաբերական մեծածավալ այդ առանձնահատկությամբ կառուցված բանաստեղծությունները ձևավորում են պոեմի ժանր, ինչպիսին, օրինակ, «Գիլգամեշի վերադարձը» խոհափիլիսոփայական պոեմն է, որի հերոսը առասպելական Գիլգամեշն է: Պոեմը բաղկացած է 230 բանաստեղծական տողերից՝ ի տարբերություն, օրինակ վերոնշյալ «Ճանապարհի երգեր» շարքում ներառված բանաստեղծությունների, որոնք վերլիբրի երկար տեսակին են պատկանում: «Հովհաննես Մկրտիչը», օրինակ, կազմված է 45, «Սիմոն Կյուրղենացին»՝ 48 բանաստեղծական տողերից: Հ. Էդոյանի բանարվեստում ազատ ռիթմերի յուրահատկության գաղտնիքներից մեկն էլ «տողանցումների» («enjambement») տողանց «rejet», «contre-rejet» և «double-rejet» տեսակների գերակայությունն է:

Թեև ազատ բանաստեղծության մեջ, ըստ «օրենքի», բացակայում են բանաստեղծական ոտքն ու ռիթմը, այնուամենայնիվ այն օժտված է նույն բնույթով, ինչ դասական բանաստեղծությունը: Այդ համընդհանուր հատկանիշը, ըստ Յու. Տինյանովի, բանաստեղծական ռիթմն է, որը դասական բանաստեղծության դեպքում իրացվում է «ճշգրիտ», իսկ անկանոն կամ ազատ բանաստեղծության մեջ՝ «անճշգրիտ» ռիթմով: «Անճշգրիտ» ռիթմերը գործածվում

---

[1] **Էդոյան Հ.**, Պոեզիան և քննադատությունը // **Էդոյան Հ.**, Շարժում դեպի հավասարակշռություն, 2009, էջ 264:

[2] **Էդոյան Հ.**, Լույսը ձախ կողմից: Եր., «Զանգակ» հրատ, 2018, էջ 24:

[3] Տե՛ս **Томашевский Б.** Стих и язык. Филологические очерки. М.: ГИХЛ, 1959, էջ 14-26:

են ակուստիկական-ներազդեցական հնարանքով, որի գործառույթը ստանում է բառը՝ «բառային միավորը»[4]: Եվ այսպես՝ Հ. Էդոյանի բանարվեստում բանաստեղծությանը երաժշտականություն հաղորդող հանգի բացակայությունը փոխարինվում է լեզվական ու պատկերային միջոցներով՝ օժտելով բանաստեղծությունը երաժշտականությամբ:

««Քաղաքային տեքստն» ու նրա իմաստավորման առանձնահատկությունները» վերնագրով ենթագլխում դիտարկում ենք Հ. Էդոյանի պոեզիայում իմաստավորված քաղաքային տեքստի դրսևորման առանձնահատկությունները: Որպես ուսումնասիրության տեսական հիմք և հասկացութային ապարատ մասնավորապես ընդունում ենք Մ. Մ. Լոտմանի և Վ. Ն. Տոպորովի աշխատություններում «քաղաքային տեքստ» հասկացության մասին տեսական-հայեցակարգային մոտեցումները:

20-րդ դարի 1960-1970-ական թթ. և մինչ օրս ընթացող սոցիալական-մշակութային վերափոխումները թելադրում-ձևավորում են իրեն ներհատուկ աշխարհայացքային համակարգ, որն էլ հենց սահմանում է գրականության զարգացման բնույթն ու սկզբունքները, այդ թվում նաև քաղաքի ֆենոմենի գեղարվեստական վերամարմնավորման առանձնահատուկ դրսևորումը: Հետևաբար, մեզանում ժամանակակից քաղաքային իրականության վերաիմաստավորման առաջին փորձը կարելի է վերագրել Հ. Էդոյանին, որի բանաստեղծական միտքը ձևավորում է յուրահատուկ «քաղաքային տեքստ»: Այն իրենից ներկայացնում է ինքնուրույն նորարարական ամբողջական գեղարվեստական համակարգ՝ իր հեղինակային ոճով, աշխարհայացքով, թեմատիկայով և դիտարկվում որպես պատմական-մշակութային վերափոխումների արդյունք:

Հ. Էդոյանի պոեզիայում քաղաքային թեման ոչ միայն հեղինակային աշխարհընկալման կամ իրականության գեղարվեստական վերամարմնավորման միջոց է՝ արմատավորված մշակութային ավանդական ընկալումներում ու պահպանված նախահիշողության խորքերում, այլև հեղինակային փիլիսոփայական և գեղագիտական հայեցակարգերի դրսևորման նորագույն միջոց, որը դուրս է գալիս թեմայի ավանդական պրոբլեմատիկայի շրջանակներից, քանի որ յուրաքանչյուր ստեղծագործական աշխարհ ձևավորում է սեփական «քաղաքային տեքստը»՝ իրեն ներհատուկ ձևերով ու պատկերավորման միջոցներով՝ աշխարհընկալման սեփական դիտանկյունից: Նկատելի է, որ բանաստեղծական ժողովածուներից «Փողոցի բաժանվող մասում» վերնագիրը, ինչպես նաև շատ բանաստեղծական վերնագրեր՝ դեռևս բանաստեղծական վաղ շրջանից, օժտված են քաղաքային իմաստաբանությամբ:

Նույն գլխում առանձին՝ «*Բանաստեղծական շարքերի թեմատիկան և պոետիկան*» ենթավերնագրով, դիտարկվում է նաև Հ. Էդոյանի առաջին՝ «Անդրադարձումներ» (1977) ժողովածուից մինչև վերջին՝ «Էլեգիկ մտորումներ» (2019) ժողովածուի շարժման ուղղությունը՝ թեմատիկան, մտածողության զար-

---

[4] Տե՛ս **Тынянов Ю.** Ритм, как конструктивный фактор стиха // **Тынянов Ю.** Проблема стихотворного языка. Ленинград: Изд. «Academia», 1924, էջ 33-35:

գացման ինքնատիպությունն ու ընդհանուր կարևոր այլ առանձնահատկություններ: Առանձնակի ուշադրության ենք բևեռել Էդոյանական սոնետի թեմատիկ-գաղափարական, կառուցվածքային յուրահատկություններին: 20-րդ դարավերջին և 21-րդ դարասկզբին գրականության զարգացման ռիթմում, բանաստեղծական մթնոլորտում լայն տարածում են ստանում սոնետն իր թեմատիկ-գաղափարական բազմաձև դրսևորումներով և սոնետների պսակը, որի առաջին փորձը մեզանում Հ. Էդոյանի «Սոնետների պսակն» է: Այն կայուն կոմպոզիցիոն կառուցվածքով 15 բանաստեղծություններից բաղկացած բանաստեղծական միատուն շարք է, և ինչպես սոնետը, այնպես էլ այն, ունի իր կառուցվածքային ձևը: Եվ չնայած նրան, որ «Սոնետների պսակը» շղթայական կառուցվածք ունի, ռիթմային ներդաշնակ-միասնաձայն համակարգ, և ամեն մի բանաստեղծություն այդ շղթայի մի օղակն է, յուրաքանչյուր բանաստեղծություն միևնույն ժամանակ կայուն կառուցվածքով ինքնուրույն միավոր է:

Հ. Էդոյանի սոնետներում (ընդհանուր հատկանիշներով հետևում են դասական սոնետի դրույթներին՝ այսկերպ հետևելով Դանթեի, Պետրարկայի և Շեքսպիրի ավանդույթներին), մասնավորապես «Սոնետների պսակում», վերարթնանում-վերաիմաստավորվում է պրովանսյան ավանդույթը, երբ սերն իր ողջ էությամբ ու տարողությամբ վերերկրային իրողություն է: Ընդհանրապես Հ. Էդոյանի արվեստի յուրահատուկ հատկանիշներից է սերը երկրային ոլորտներից տանել սուբյեկտիվ ընկալումների երկնային ոլորտ:

Հ. Էդոյանը սկսել է բանաստեղծություններ գրել շատ վաղ հասակում: Սակայն որպես բանաստեղծ, ստեղծագործական կենսագրությունը փաստացիորեն սկսվում է 1967 թ. «Գարուն» ամսագրի երկրորդ համարում լույս տեսած նրա առաջին բանաստեղծությամբ: Իսկ դեռևս 1965 թ. ինքն ու Հ. Գրիգորյանն իրենց առաջին ժողովածուները ներկայացնում են տպագրության: 1975 թ. լույս է տեսնում Հ. Գրիգորյանի «Երգեր առանց երաժշտության» բանաստեղծությունների առաջին ժողովածուն, իսկ 1977 թ.՝ 12 տարի հետո միայն, «Անդրադարձումներ»-ը՝ Հ. Էդոյանի բանաստեղծությունների առաջին ժողովածուն, որում ամփոփված են 1964-1976 թվականներին գրված բանաստեղծությունները: «Անդրադարձումներ»-ում ներառված առաջին բանաստեղծություններին հատուկ են ռոմանտիկական ու սիմվոլիստական նրբերանգներ, որոնք առավելապես շեշտված են ռոմանտիկական պոեզիային հատուկ մեղեդայնությամբ: Որպես օրինակ կարելի է հիշել «Հին երգ» բանաստեղծությունը («*Անձրևն ահա կաթկթում է մայթերին, // անձրևն ահա կաթկթում է մայթերին, // որպես անդարձ կորած երազ, որպես հուշ, // անձրևն ահա կաթկթում է մայթերին: // Ես նայում եմ լուռ ինքնափոփ շենքերին, // ես նայում եմ լուռ ինքնամփոփ շենքերին, // կանգնած աղոտ լույսերի մեջ փողոցի // ես նայում եմ լուռ ինքնամփոփ շենքերին….*»[5]), որը, կարելի է ասել, «շնչում» է տերյանական ոգով: Չնայած նրան, որ առաջին իսկ տողերից մի պահ հիշեցնում է սիմվոլիստ բանաստեղծների ստեղծագործությունները, այն անվիճարկելիորեն բացարձակապես ինքնուրույն ու ինքնատիպ ստեղծագործություն է: Բանաստեղծության

[5] **Էդոյան Հ.**, Ընտրանի: Եր., «Հայագիտակ», հրատ., 2016, էջ 9:

մեջ շեշտադրված է պատկերավոր, հուզական-հոգեբանական կողմը: Քաղաքի բնապատկերը հստակ ուրվագծված է. այն մելամաղձոտ ներապրումներով պարփակված քնարական «ես»-ի թախծոտ հոգեվիճակի արտացոլանքն է: Սիմվոլիստական երանգավորումներով օժտված այս և սակավաթիվ այլ բանաստեղծություններ ձևով, իմաստով ու հնչերանգով էապես տարբերվում են ինչպես այդ շրջանի, այնպես էլ հետագայում արարված բանաստեղծություններից: Հաջորդ բանաստեղծություններում արդեն նկատելի են դասական պոեզիայի ավանդական սկզբունքներից հեռացում, և «սիմվոլիզմ», «ռոմանտիզմ» եզրույթների գործածումը Էդոյանական բանաստեղծությունների առնչությամբ դառնում են չակերտավոր (այս առումով ռոմանտիզմ կամ սիմվոլիզմ ասելով՝ նկատի չունենք այդ հասկացություններն իրենց ավանդական ընկալումներով. այն ընդամենը ստեղծագործական առաջին շրջանում ռճական երանգավորում է հաղորդում բանաստեղծությանը), իսկ գրական տարաբնույթ ձևերի նրբերանգների համակցումները ձևավորում են պոեզիայի համադրական բնույթը, որն արդեն մոտեցնում է պոստմոդեռնիստական արվեստի յուրահատուկ բնույթին: Արդյունքում ստացվում է սիմվոլիզմ կամ ռոմանտիզմ (օրինակ, բանաստեղծական տեքստի կառուցվածքի մենախոսական բնույթը, որը հատուկ է ռոմանտիկական արվեստին, հատուկ է նաև Հ. Էդոյանի բանաստեղծական աշխարհին)՝ պոստմոդեռնիզմի համատեքստում և այսպես շարունակ: Ձևավորվում է քնարական «ես»-ի նոր տեսակ՝ իր աստվածակերպ էությամբ, աշխարհի ինտելեկտուալ ճանաչողության սկզբունքներով, ներաշխարհի ողջ հարստությամբ ու բազմաշերտությամբ, որում բյուրեղացած են հավիտենական համամարդկային երևույթները: Այդ հակասական ժամանակներում, երբ մարդը միաժամանակ և՛ հազարամյա հումանիստական արժեքային ավանդույթների կրողն է, որի օգնությամբ փորձում է վերագտնել մարդկային գոյության իմաստը, և՛ այդ արժեքներից հեռացած, 20-րդ դարի հարակարծական փորձություններով անցած մոլորյալ, ում համար մարդկային իրական բնության մասին պատկերացումներն այլևս անցյալում են, իսկ ինքն աշխարհին ու հավերժական արժեքներին նայում է կասկածամիտ ու հեգնական հայացքով՝ արդյունքում ձևավորելով պոստմոդեռնիստական հերոսի երերուն-հակասական կերպարը, Հ. Էդոյանը, հենց առաջին բանաստեղծություններով, հայ գրականություն է բերում իր զարգացման բարձրակետին հասած, հավաքական հոգեբանությամբ հոգեբանական բարդ կառուցվածքով քնարական «ես», յուրահատուկ ազատ ռիթմական կառուցվածքով բանաստեղծական այնպիսի նմուշներ, որոնցում անդրադառնում-թանձրանում են տարաբնույթ թելերով ու կողմերով մարդկության ողջ ճանապարհին ու ճակատագրին կապված համամարդկային երևույթները՝ դառնալով կյանքի և մարդու հավերժական թեմաների գեղարվեստական դրսևորումներ: Հենց առաջին գրքի վերնագիրը՝ «Անդրադարձումներ», իր մեջ կրում է Հ. Էդոյանի բանաստեղծական աշխարհի՝ տարբեր շրջաններում գրված բանաստեղծական ժողովածուների ողջ գաղափարական խորհուրդը. բավական է հիշել միայն անդրադարձման (լույսի) օրենքը: Հոգևոր առումով նրա պոեզիան աստիճանական զարգացում չի ապրել: Սկսած առաջին ժողովածուից՝ նրա պոեզիան կրոնական-փիլիսոփայական գիտակցության վերամարմնավորումն

է: Այստեղ տեղին է շեշտել մի իրողություն, այն, որ Հենրիկ Էդոյանը պատկանում է պատմություն ունեցող բանաստեղծների թվին, որոնց բանաստեղծական ընթացքը շրջափոխման ուղի չի անցել: Առաջին ժողովածուի («Անդրադարձումներ» (1977)) գեղարվեստական-կառուցվածքային և այլ հատկանիշները ծավալվում-տարածվում են մինչև վերջին ժողովածուն («Էլեգիկ մտորումներ» (2019)): Այդ համընդհանրությունը հատկանշվում է առաջին հերթին կայուն մոտիվային ու պատկերային համակարգով, այն է՝ քաղաքի տարածական մոտիվը, միֆակիրառումն ու միֆաստեղծումը, որի հիմքում իրականության փիլիսոփայական վերաիմաստավորման խնդիրն է, տարաբևեռ ժամանակային շերտերի կցորդման սկզբունքը, համընդհանուր հիշողության տարերքին անդրադառնալը, տարբեր կրոնական համակարգերի, առավելապես քրիստոնեական սյուժետային պատկերների ու մոտիվների գործածումը, որոշ կողմերով նաև մոտենալով դանթեական ավանդույթին՝ նյութական աշխարհին նայելով աստվածային ու վերերկրային սիրո դիտանկյուններից, որոնք բանաստեղծությանը հաղորդում են մետաֆիզիկական բնույթ և թույլ են տալիս բացահայտել էդոյանական բառերի թաքնված իմաստները, տեսնել արքետիպական պատկերներն ու իմաստային զուգահեռները, որոնք, սակայն, երբեմն, կարող են նաև ուղղակիորեն չգործածվել բանաստեղծության մեջ, դրսևորվել թաքնված՝ միահյուսված ձևով, սակայն բանաստեղծությունն օժտված լինի հոգևոր ներիմաստով (ասվածն առավել տեսանելի է «Անդրադարձումներում»): Առավել ամփոփ ձևակերպումով՝ Հ. Էդոյանի պոեզիայի էական թեմաներն ու մոտիվներն իրենց նորարարական կայուն ձևավորումներով-ձևակերպումներով դրսևորվում են հենց առաջին իսկ ժողովածուի բանաստեղծություններում, որոնց առավել հատկանշական է մետաֆիզիկական բնույթը: Իսկ բանաստեղծական աշխարհի կարևորագույն հասկացակարգը փոխաբերությունն է: Մետաֆորն ընդհանրապես իր փիլիսոփայական ու գեղարվեստական սկզբնաղբյուրներով, ինչպես ցույց է տալիս գրականության պատմությունը, մասնավորապես՝ մետաֆիզիկական պոեզիայում, ճանաչողական գործառույթ է իրականացնում: «Դանթեի պոեմն ամբողջությամբ հսկայական փոխաբերություն է, և նրա տողերում առանձին փոխաբերությունները տեղ չունեն»[6],- գրում է Թ. Էլիոթը Դանթեի հանրահայտ պոեմի առնչությամբ, որն, իրավամբ, կարելի է նկատի ունենալ նաև Հ. Էդոյանի պոետիկայի պարագայում, որում, հատկապես տարածական-ժամանակային բնորոշումները քնարական «ես»-ի՝ նյութական ոլորտներից դեպի անդրանցական ոլորտներ ներթափանցելու հոգևոր շարժման փոխաբերական դրսևորումներ են:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Երկրորդ գլուխը, որի վերնագիրն է «**Արքետիպերի ու միֆերի նորովի կիրառումը Հ. Էդոյանի պոեզիայում**», իր հերթին բաղկացած է երկու են-

[6] **Элиот Т.** Избранное: Религия, культура и литература, Т. 1-2, (пер. с англ. под ред. А. Н. Дорошевича; сост., послесл. и коммент. Т. Красавченко). М.: Изд. «РОСПЭН», 2004, с. 301.

թագլխից՝ «*Կոլեկտիվ անգիտակցականի նշանակությունն ու նրա արքետիպերի վերահիմաստավորումը*» և «*Հ. Էդոյանի մտածողության առանձնահատկությունները միֆաբանաստեղծական մոտեցման համատեքստում:* Առաջին ենթագլխում բանաստեղծական առանձին պատկերների վերլուծման միջոցով, տեսական (արքետիպերի տեսությամբ) հիմնավորումներով փորձել ենք բացահայտել Հ. Էդոյանի պոեզիայի տարաբնույթ առնչությունները ազգային ու համամարդկային որակներին՝ այն դիտարկելով այդ համատեքստում որպես օրգանական ամբողջություն, իսկ քնարական «ես»-ը՝ որպես սուբյեկտիվ ու հավաքական հոգեբանությամբ գիտակցություն:

Պոեզիայի ճանաչողության խնդրում հետազոտության արքետիպական կողմնորոշումն այժմ արդի գրականագիտության կարևորագույն միջոցն է, որի առանցքը Կ. Գ. Յունգի տեսությունն է: Այն գրականագիտության համար դառնում է միջոց՝ ներթափանցելու պոեզիայի թաքնված իմաստների խորքերը: Սակայն յունգյան տեսությունն ինքնին չի կարող սահմանել իսկական արվեստի էությունը. այն հնարավոր է միայն գրականագիտական ու նշյալ տեսության փոխհամատեղմամբ, ինչն էլ պայմանավորում է տվյալ աշխատության միջգիտակարգային բնույթը:

Արդի գիտության մեջ «արքետիպ» եզրույթն առաջին անգամ առաջարկել էր 20-րդ դարի վերլուծական հոգեբանության հիմնադիր, կոլեկտիվ անգիտակցականի տեսության հեղինակ Կ. Գ. Յունգը: Համաձայն նրա՝ արքետիպը մարդկային փորձի հիման վրա ձեռք բերված նախապատկեր է, որը փոխանցվում է սերնդեսերունդ: Արքետիպերի քանակը կոլեկտիվ անգիտակցականում անսահմանափակ է: Սակայն Կ. Գ. Յունգի տեսության մեջ առավելապես ուշադրություն է դարձվում պերսոնայի, անիմայի և անիմուսի, ստվերի և ինքնության արքետիպերին, որոնք խորհրդանիշների տեսքով դրսևորվում են գեղանկարչությունում, գրականությունում, կրոնում: Հ. Էդոյանի բանաստեղծական աշխարհում տեսանելի են տարաբնույթ արքետիպեր և խորհրդանիշներ: Արքետիպական պատկերներ ու խորհրդանիշներ են նկատվում Հ. Էդոյանի «Լռությունը նույնն է, տարբեր են խոսքերը» («ստվերի» արքետիպ), «Օր առանց հանդերձանքի» («երեխայի» արքետիպ), «Երկու կղզի» («կղզու» արքետիպ), աստվածաշնչյան արքետիպական խորհրդանիշներ ու պատկերներ (ջրի սիմվոլիկա, դրախտի, Սուրբ Քաղաքի արքետիպեր և այլն): Հ. Էդոյանի կողմից արքետիպական, միֆաբանական խորհրդանիշների և պատկերների վերահիմաստավորումը դրսևորվում է ինչպես գիտակցական, այնպես էլ անգիտակցական մակարդակում գործածումով:

Այսպիսով՝ բանաստեղծություններում գործածված արքետիպերի գիտական-տեսական վերլուծությունը թույլ է տալիս ներթափանցել ստեղծագործության իմաստային-փիլիսոփայական խորքային շերտերը, պատկերային ու իմաստային մակարդակներում փնտրել բանաստեղծությունում գործածված գեղարվեստական նախապատկերի ներիմաստը, իրերի և երևույթների համընդհանրական նախասկիզբը, մետաֆիզիկական ենթատեքստերն ու միֆաբանական սկզբնաղբյուրները:

Կարելի է ասել, որ «Վերլուծական հոգեբանության և բանաստեղծական-գեղարվեստական ստեղծագործության կապի մասին» հոդվածում և այլ աշխատություններում վերլուծական հոգեբանության հիմնադրի առաջ քաշած տեսության ճշմարտացիության լավագույն հաստատումը կարելի է համարել Հ. Էդոյանի պոեզիան՝ մեր կողմից ընտրված բանաստեղծությունների («Օր առանց հանդերձանքի», «Երկու կղզիներ», «Ես հիշում եմ», «Սիրելիս, մենք եղել ենք» և այլն) օրինակով:

Երկրորդ՝ «*Հ. Էդոյանի մտածողության առանձնահատկությունները միֆաբանաստեղծական մոտեցման համատեքստում*» ենթավերնագրի ներքո դիտարկվում են գրողի միֆաբանաստեղծական ստեղծագործությունների առանձնահատկությունները: Հ. Էդոյանը, ստեղծելով միֆաբանաստեղծական յուրահատուկ արժեհամակարգ, յուրաքանչյուր իրադարձություն ընկալում է աշխարհի արարման սեփական տեսանկյունից: Միֆը, որպես գեղարվեստական աշխարհի բաղկացուցիչ տարր, դիտարկվում է տարբեր տեսանկյուններից և կապված է այն սկզբնաղբյուրներին, որոնց անդրադարձել է բանաստեղծը:

Հ. Էդոյանի բանաստեղծական ստեղծագործություններում միֆական խորհրդանշական կերպարների ու պատկերների գործածությունը բազմաբնույթ ու բազմաձև է: Նրա բանաստեղծական աշխարհում շղթայակապվում են տարբեր մշակութային շերտեր, հայ, հունական, հռոմեական, եգիպտական միֆաբանության, միջնադարյան և, մասնավորապես, աստվածաշնչյան «միֆական» սյուժեներ, պատկերներ, մոտիվներ ու կերպարներ, տարբեր քաղաքակրթություններում միֆական նշանակություն ունեցող խորհրդանիշներ, խորհրդանշական արքետիպեր, որոնք «միֆաբանաստեղծական» կառուցվածքում ձեռք են բերում նոր իմաստներ:

Մասնավորապես ուշադրության է արժանի կյանքի ու մահվան թեման. այն միֆաբանական աշխարհի համայնապատկերում ամենաառանցքային մասն է կազմում: Միֆական պատկերացումների շնորհիվ բացահայտվում-մեկնաբանվում է մահվան ֆենոմենի առեղծվածը, այլաշխարհն ու այսաշխարհը սահմանակցվում-ներդաշնակվում են, փոխադարձ կապ ստեղծում անտեսանելիի ու տեսանելիի միջև՝ կյանքը դարձնելով անանցողիկ, հավերժական իրողություն:

Առանձնակի ուշադրություն է գրավում բանաստեղծական տեքստում միֆական հատուկ անունների գործածումը:

Միֆական կերպարները, «կերպարանափոխված» «վերակերպավորվելով» բանաստեղծական համատեքստում, թույլ են տալիս որոշակի պատկերացում կազմել բանաստեղծի աշխարհըմբռնման ու գեղարվեստական մտածողության մասին: Երբեմն միֆական կերպարների միջոցով պատկերում է իրականության կամ սեփական «ես»-ի հետ կոնֆլիկտի մեջ գտնվող հերոսների աշխարհայացքի բարոյափիլիսոփայական արժեքները (դրա վառ օրինակն է «Աստվածների ժամանակը» բանաստեղծությունը):

Հ. Էդոյանի միֆաբանաստեղծական արվեստը կարելի է բաժանել երկու ճյուղի, որոնք ստեղծված են իմաստաբանորեն ակտիվ, հարուստ միֆական հերոսների կերպարներով (Ոդիսևս, Զևս, Ապոլլոն, Արա Գեղեցիկ և այլն) և

խորհրդանշական բնույթ ունեցող բնության երևույթների, տեղանունների, տարածական միավորների (անձրև, ջուր, սուրբ լեռ, սուրբ քաղաք, Իթակե և այլն) և այլնի տեսքով:

Հ. Էդոյանի միֆաբանաստեղծական աշխարհին բնորոշ է սեփական աշխարհի հակադրումը նյութական աշխարհին, որը դրսևորվում է նաև խորհրդանշական բնույթ ունեցող տարածական մոտիվների միջոցով («Նամակ Բաբելոնից», «Նյու Յորքի գիշերները», «Լեթա գետը» և այլն): Կարևորվում է ոչ այնքան աշխարհագրական դիրքը, որքան հեղինակի գեղարվեստական աշխարհում պատկերված այդ «տեղանքի» անհատական մոտեցման սիմվոլիկան: Իսկ փոխաբերական արտահայտությունները բանաստեղծին թույլ են տալիս բառային միավորների միջոցով պատկերավոր կերպով արտահայտել անբացատրելին: Շատ հաճախ միմյանց հակադարձող պատկերներն ամբողջանում են՝ մի կողմից գաղտնագիտական, զգայական նրբերանգներ հաղորդելով բանաստեղծությանը, մյուս կողմից՝ զգացմունքային-հուզականը ետին պլան է մղվում, դառնում ածանցյալ՝ շեշտված ընդգծվում փիլիսոփայական ներիմաստը՝ «միաբովանդակությունից» անցնելով բազմաբովանդակության:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

«**Հ. Էդոյանի բանաստեղծական մետաֆիզիկան հոգևոր-մշակութային ավանդույթների համատեքստում**» վերնագիրն ունի մեր ուսումնասիրության երրորդ գլուխը, որն իր հերթին կազմված է երկու ենթագլխից, որոնցում, ըստ էության, փորձ է արվում առանձնացնելու ու բացահայտելու Հ. Էդոյանի պոեզիայի մետաֆիզիկական բնույթով առավելագույնս ընդգծված կարևորագույն շերտերը, այն հասկացությունների յուրահատկությունները, որը ներառում է մետաֆիզիկա եզրույթը, այն է՝ բանաստեղծության հոգևոր բնույթը, գոյաբանական, անդրանցական, թանատոլոգիական ներիմաստները, որոնք բացում են հոգևոր-գոյաբանական երևույթների աներևույթ շերտերը:

Երրորդ գլուխը սկսվում է *«Անտիկ, միջնադարյան ու աստվածաշնչյան ավանդների պոետական պատկերավորման առանձնահատկությունները»* վերնագրով ենթագլխով, վերջավորվում՝ «*Կյանքի և մահվան իմացաբանական հիմնախնդիրները*» ենթագլխով:

Առաջին ենթագլխում մինչ Հ. Էդոյանի հոգևոր բնույթ կրող բանաստեղծությունների քննությունը առաջին ենթավերնագրում որոշակիորեն անդրադարձել ենք մշակույթի, կրոնի ու գրականության պատմափիլիսոփայական մտքի էվոլյուցիային՝ անտիկ, միջնադարյան, վերածննդյան ժամանակներից մինչև արդի ժամանակներ, քանզի այդ համապատկերի վրա առավել հստակորեն տեսանելի է, մի կողմից, այդօրինակ բնույթ ունեցող բանաստեղծությունների ստեղծման հրամայականը, մյուս կողմից՝ ավանդականի ու նորարարականի յուրահատուկ միահյուսումը: Այսպիսով՝ ատենախոսության երրորդ գլխի ուսումնասիրության առանցքում Հ. Էդոյանի՝ քրիստոնեական մոտիվներով ու խորհրդանիշներով գրված բանաստեղծություններն են, նաև

աղոթք-բանաստեղծությունների առանձնահատկությունները, հատկապես քրիստոնեական սկզբունքների ընկալման տեսանկյունից:

Ավանդական կրոնական խորհրդանիշերի և պատկերների շարժման ուղղվածությունը Հ. Էդոյանի ստեղծագործական ընթացքի մշտառկա ուղեկիցն է: Առանձին բանաստեղծություններում «լսվում» են նաև եկեղեցական երգ-չախմբի հուզաբուխ մեղեդայնությունը և տիեզերքին ու Աստծուն ձուլվելու ձգտումը: Նա համադրում է հնագույն օրհներգներում, սրբասացություններում գերակշռող պատկերները, աստվածաշնչյան պատվիրանները («*Միրել մեր-ձավորին - // Դա ամենաերկար // ուղին է սիրո*»[7]), խորհրդանիշները (վարդ, աղավնի, դափնեճյուղ և այլն)՝ բացահայտելով հավերժական իրականության, կեցության ու կենսափիլիսոփայական բանաստեղծական մարմնավորման հոգեբանափիլիսոփայական, կրոնահոգեբանական գաղափարների նրբերանգները: Խորհրդանշական պատկերները լայնանում են, դառնում բարձրագույն ճշմարտության չափանիշ: Փոխաբերություններն առարկայացվում, ձգտում են դեպի առեղծվածը՝ վերածելով դասական ճշմարիտ պատկերը բազմապլանության:

Պետք է նկատել նաև, որ բանաստեղծն անդրադառնում է ոչ միայն աստվածաշնչյան տեքստերի բովանդակությանը, խորհրդանշական պատկերներին ու մոտիվներին, այլ նաև բանաստեղծությունների հնչողությանը եկեղեցու մեջ: Բանաստեղծության մեջ զգացվում է այն ապրումը, որն ունենում է եկեղեցի այցելած մարդը. այն դառնում է աղոթք (առավել ճշմարիտ կլինի ասել՝ աղոթքի բանաստեղծական վերաձևակերպում) և ներանձնական հայտնություն: Չնայած բանաստեղծական տեքստն իրենից ներկայացնում է աղոթքի փոփոխակում (վարիացիա), սակայն Հ. Էդոյանի շատ բանաստեղծություններում բացակայում է աղոթքի համար պարտադիր բաղադրատարրը՝ եզրափակիչ «ամեն» բանաձևը:

Մի շարք բանաստեղծություններին («Շուրջս ոչինչ է…», «Միշտ կա մեկը», «Դու մենակ չես», «Հայտնություն» և այլն)[8] հատուկ են հրեական աղոթքի կադդիշ (արամերեն՝ «կադդիշ» (קַדִּישׁ;) - «սուրբ»)[9] ձևը:

Կյանքի կրոնական-գեղարվեստափիլիսոփայական ընկալումը երբեմն կարող է տեսանելի-առարկայական իրականության նկատմամբ կրել մետաֆիզիկական բնույթ, որի դեպքում բանաստեղծը գեղարվեստական զգացողության պատկերային համակարգում բովանդակությունն ընկալում է որպես նեռաշխարհում պարփակված անմարմին ու աննյութ հոգևոր սկիզբ, դեպի նախագո էություն ուղղորդող խորհրդանշան: Իսկ երբ հոգևոր սկիզբն ու բանաստեղծի պոետական-փիլիսոփայական հայացքը մեկտեղվում-փոխանդրադարձվում են, շատ հաճախ պատկերավորված-իմաստավորված կրոնական գիտակցությունը ստանում է բնապաշտական (պանթեիստական) երանգ, որն

---

[7] **Էդոյան Հ.,** Փողոցի բաժանվող մասում: Եր., «Ապոլոն» հրատ., 2006, էջ 70:

[8] **Էդոյան Հ.,** Լույսը ձախ կողմից: Եր., «Զանգակ» հրատ., 2018, էջ 5, 9, 27, 43:

[9] Электронная еврейская энциклопедия. [Առցանց] https://eleven.co.il/judaism/liturgy-prayer/11915/ (մուտք՝ 15.11.2019):

աստվածայինի զգայելի ընդգրկումն է տեսանելիի սահմաններում: Սակայն Հ. Էդոյանի բնապաշտությունը (բնապաշտական փիլիսոփայության դիրքերից են արարված «Քաղաքի ծառերը», «Անտառը ես եմ», «Ծիածան», «Ռելիեֆ», «Աշնան անդունդի մեջ», «Ծառերի առավոտյան էլեգիան» և մի շարք այլ բանաստեղծություններ)[10] համադրվում է քրիստոնեական հավատքի հետ, որը բանաստեղծի գեղարվեստական զգացողության և ավանդական կրոնական գիտակցության ճշգրիտ-ավանդական համադրություն չէ. այն հունավորվում է հեղինակային-յուրակերպ անեզրական զգացողություններից ու հոսում դեպի անտեսանելի բարձրագույն հոգևոր սկիզբ:

«Փողոցի բաժանվող մասում» գրքի «Լույսը ճիշտ պահիր» շարքի բանաստեղծություններն այս կամ այն կերպ հարաբերակցվում են բիբլիական թեմաներին ու նրանց իմաստներին, իսկ «Քայլեր և ստվերներ» գրքի «Ճանապարհի երգեր» խորագրի ներքո զետեղված բազմաշերտ ու բարդ կառուցվածքով բանաստեղծություններն արարված են նորկտակարանյան մոտիվներով, աստվածաշնչյան պարզությամբ, որոնք ավետարանական սրբերի՝ Հովհաննես Մկրտչի, Սիմոն Կյուրենացու, Մարիամ Մագդաղենացու և այլոց առանձնախոսության բանաստեղծական այլացումն են: Էպիկական բնույթ կրող շարքի վարքաբանական (ագիոգրաֆիկ) բանաստեղծությունները, որոնցում ձևավորված է սյուժետային տարածություն, ունեն մի կողմից հստակ կոմպոզիցիոն կառուցվածք, մյուս կողմից՝ քնարափիլիսոփայական հնչեղություն: Տարաբնույթ թեմաներով բանաստեղծություններում երևան է բերված նորկտակարանյան սյուժեների և պատկերների հեղինակային մեկնաբանությունը, ավանդական սյուժեների արդիական յուրօրինակ վերապատումը, որոնք օգնում են ընթերցողին հասկանալ պոետի մտադրությունը, ինչպես նաև ստեղծում են շարքի յուրահատուկ պոետիկան:

Հ. Էդոյանի բանաստեղծական աշխարհին բնորոշ առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ հաճախ բանաստեղծը բանաստեղծության վերնագրով փորձում է առավելագույնս մատնանշել տեքստի բովանդակությունը: Հենց շարքի վերնագիրը՝ «Ճանապարհի երգեր», այն «մուտքագրվող գաղտնաբառն» է, որի տակ ամփոփված է շարքի բանաստեղծությունների բազմաշերտ փիլիսոփայական բովանդակությունը:

Դժվար չէ նկատել, որ Հ. Էդոյանի գրեթե բոլոր բանաստեղծություններում բանաստեղծն այս կամ այն կերպ անդրադարձել է աստվածաշնչյան թեմաներին, որպես կենսական արժեքները վերաարժևորելու միջոց: Աստվածաշնչյան մոտիվները, պատկերներն ու կերպարները «ներկա» են, կարելի է ասել, բոլոր բանաստեղծական շարքերի բանաստեղծություններից շատերում՝ հաճախ տրամաբանական հաջորդականությամբ «հոսելով» բանաստեղծությունից բանաստեղծություն՝ ձևավորելով միջտեքստային յուրահատուկ կապ՝ դառնալով նրա պատկերակերտման համակարգի հեղինակային ոճաձևերից մեկը:

---

[10]**Էդոյան Հ.,** Ընտրանի, 2016, էջ 313, 231, 106, 60, 42, 16:

Վերջին՝ «*Կյանքի և մահվան իմացաբանական հիմնախնդիրները*» վերնագրով ենթագլխում ևս նախ համառոտ սահմանել ենք կյանքի ու մահվան ընկալումների էվոլյուցիան, նրանց դրսևորումները տարբեր ժամանակահատվածներում՝ հնագույն ժամանակներից մինչև արդի իրականությունում տարաբնույթ ստեղծագործողների բանաստեղծությունների ենթաշերտերում: Ըստ անհրաժեշտության, առաջին հայացքից համանման որակների զուգահեռ համեմատականներով փորձել ենք նաև ընդգծել էդոյանական բանաստեղծական արվեստի յուրահատկությունը՝ հիմքում ունենալով տարբեր պատմական ու արդիական փիլիսոփայական հայեցակարգեր, կրոնափիլիսոփայական ուսմունքներ և այլն:

Կյանքի և մահվան իմացաբանական խնդիրները դառնում են Հ. Էդոյանի ստեղծագործական արարչագործության գլխավոր թեման՝ համաձուլելով անցյալը, ներկան ու ապագան: Նա սեփական գեղագիտական հայեցակարգերի դիտանկյունից է ընկալում իրականությունը՝ համադրելով հայ և համաշխարհային կրոնափիլիսոփայական հոգեբանության առանձնահատկությունների ուսումնասիրությունների խոր իմացությունն ու զգայական, գեղարվեստական մտածողությունը, ինչի շնորհիվ բանաստեղծական խոհը հոսում է ինքնատիպ ընթացքով՝ բացելով բանաստեղծական նոր տարածություն: Նրա համար մահը, որը կրկնվում է կյանքից կյանք, հավերժության «երկվորյակն» է, և հնարավոր է ձեռք բերել միայն «օրերի գծերից դուրս»՝ գծային ժամանակի հաղթահարման միջոցով: Նա խորամուխ է լինում տիեզերական տարածությունն ու երկրային տարածությունը մերձեցնելու, մեկը մյուսով լիցքավորելու և զորացնելու, միմյանց մեջ փոխներթափանցելու, ինչի վառ ապացույցը «Էլեգիկ մտորումներն են», որոնցում քրիստոնեական խորհրդանիշների ու գաղափարների բարեշրջության բանաստեղծական մոտեցումները սկզբնավորվում են քրիստոնեական պատկերներում և իրենց էվոլյուցիան վերջնավորում միֆաբանական տարբեր սյուժեների ու մոտիվների հեղինակային ընկալումներով:

Կյանքի և մահվան մասին պատկերացումները մարդկության հոգևոր ու գիտակցական մակարդակի, ազգային մտահայեցողության մասին պատկերացումների առհավատչյան են, հետևաբար «մահվան» գաղափարի գեղարվեստական իմաստավորումը գրականության պատմության ամենաառանցքային թեմաներից մեկն է: Պատմական-մշակութային ամեն մի դարաշրջանում կյանքի ու մահվան թեման տարբեր երանգներով է պատկերվում: Մահվան ֆենոմենի ընկալումները պայմանավորված են կրոնական ու էթնոմշակութային առանձնահատկություններով և ստեղծագործողի ոգու շարժման ուղղվածությամբ, բայց համապատասխան այն բանին, որ մարդը զարգանում, հոգեպես հարստանում է՝ նպաստելով սոցիալական միջավայրի կայացմանն ու զարգացմանը, գիտական նոր բացահայտումներին զուգընթաց, և շատ հաճախ անձնային գիտակցությունը զարգանում է մինչև վերանձնային գիտակցություն (Հ. Էդոյանի քնարական «ես»-ը այդ վերգիտակցության կրողն է՝ կանգնած ընթերցողի՝ իրական աշխարհի և անդրանցական (տրանսցենդենտալ) իրականության միջակայքում), շատերի համար «Աստված», «կյանք» և «մահ» հասկա-

ցությունները դառնում են առավել ընդհանրական, այսինքն՝ ավելի ընդլայն, քան ընդունված է տարբեր կրոնական ուսմունքներում կամ հայեցակարգերում: Եթե ինչպես ցույց է տալիս գրականության պատմությունը, մահը մարդկային կյանքի ամենառողբերգական իրողությունն է՝ պայմանավորված առաջին հերթին նրանով, որ մարդը վախենում է անհայտությունից և դժվարությամբ է ընդունում-հասկանում, որ ինքը, համաձայն իր կենսաբանական բնույթի, մահկանացու է, և որ սեփական կենսաբանական գոյությունը, ինչին այդքան կապված է, մի օր կդադարի գոյություն ունենալուց, ապա Հ. Էդոյանի բանաստեղծական աշխարհում կյանքի և մահվան սահմանները ջնջված են. այստեղ ձևավորվում է այն գաղափարը, որ մարդը, անկախ իր գոյաբանական կարգավիճակից, անմահ է, իսկ մահն ընդամենը գիտակցության անցումն է դեպի այլ մակարդակ՝ նյութական տիեզերքի սահմաններից դուրս, դեպի հոգու և գիտակցության ոգեղեն ոլորտ՝ հերթական ֆիզիկական աշխարհում, հերթական մարմնավորումից հետո: Եվ պայմանավորված էմպիրիկ մակարդակում սեփական որակական վերելքներով՝ նրան տրված է հասնել առավել բարձր մակարդակի, ինչը սկզբունքորեն ենթադրում է մարդկային գործունեության հնարավորությունների սահմանների ընդլայնում: Կարելի է ասել, որ հենց դա էլ Հ. Էդոյանի բանաստեղծության գլխավոր փիլիսոփայական հայտնագործություններից ու նրա գլխավոր ներդրումներից մեկն է մարդկային էության-գիտակցության խնդիրների փիլիսոփայական իմաստավորման մեջ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսումնասիրության արդյունքում հանգել ենք հետևյալ եզրակացություններին.

1. Հ. Էդոյանի բանաստեղծական աշխարհի նորարարական բնույթն առաջին հերթին սահմանվում է ազատ բանաստեղծական կառույցի ռիթմաստեղծ գործառույթների փոխարկությունների արդիականությամբ, ինչը պայմանավորված է ոչ միայն արդիական միտումներով, այլև հեղինակային աշխարհայացքային նախադրյալներով: Դիտարկելով բանաստեղծական տողի տողադարձման առանձնահատկություններն իրենց կառուցվածքային բազմաձևությամբ՝ բացահայտել ենք, որ Հ. Էդոյանի բանաստեղծական ազատ կառույցն օժտված է տողանցով՝ («enjambement») իր տարաբնույթ դրսևորումներով («rejet», «contre-rejet» և «double-rejet»), որոնք էլ ձևաստեղծում են նրա բանաստեղծական առանձնահատուկ համակարգը: Չնակառուցվածքային նորովի վերաիմաստավորման շնորհիվ բանաստեղծությունը ձեռք է բերում ինտոնացիոն-ռիթմական յուրահատուկ նրբերանգներ: Իսկ հանգի բացակայությամբ պայմանավորված՝ բանաստեղծական ձևի մեղեդայնությունը լրացվում է մտքի շարժման ազատ իմպրովիզացիոն ներքին տոնայնությամբ, բառային ու պատկերային միջոցներով:

2. Պոստմոդեռնիստական պոետիկայի տեսական հայացքների ամբողջական պատկերի համատեքստում, քնարական տեքստի սահմաններում քննելով Հ. Էդոյանի բանաստեղծությունների քնարական «ես»-ի պատկերումները՝ ընդգծել ենք, որ էդոյանական քնարական «ես»-ը դրսևորում է իր «երկարժեք-երկբնույթ», շատ հաճախ նաև չտարբերակված (սինկրետիկ) սուբյեկտիվ բնույթը, իր լինելիությունը անդրանցական ու գոյաբանական իրականությունների սահմաններում, որը, յուրացնելով իրականությունը, ներթափանցում է անդրանցականի մեջ: Առաջին պլան է մղվում անհատական գիտակցության խնդիրը: Սուբյեկտիվ գիտակցությունը կրում է տիեզերական բացարձակ գիտակցության ու կոլեկտիվ գիտակցության նախահիմքերը:

3. Դարի հրամայականով ձևավորված հեղինակային նորագույն, ոչ ավանդական մտածողությամբ պայմանավորված՝ քաղաքային պատկերների կիրառմամբ Հ. Էդոյանի պոետիկան ավանդական ուրբանիզմ եզրույթի պատմական-տեսական հիմքերից հեռանում է դեպի «քաղաքային տեքստ» հասկացակարգի տեսական հիմունքները: Նշված տեսության հիմնադրույթների դիրքերից համակողմանիորեն վերլուծելով Հ. Էդոյանի պոետիկայի այդ առանձնահատկությունը՝ բացահայտել ենք, որ Հ. Էդոյանի քաղաքային տեքստն իր բնույթով բարդ կառուցվածքային համակարգ է՝ ներառելով տարաբնույթ պատկերներ, սյուժեներ ու մոտիվներ, որոնք բանաստեղծական տարածության մեջ խորհրդանշական վերաձևակերպումներով կառուցում են հեղինակային քաղաքային գեղարվեստական մոդել՝ մետաֆիզկական դրսևորումներով, քրոնոտոպիկ բարդ կառուցվածքով պայմանական տարածություն: Բանաստեղծական իրականության մեջ քաղաքը կարող է պատկերվել նաև վախճանաբանական, ապոկալիպտիկ տրամադրություններով, կանխատեսումներով՝ այս կերպ ձևավորելով միֆաբանական տարածություն, որն իր դրսևորումներով պատկերում է իրական-նյութական տարածության մեջ արդի քաղաքակրթության ճգնաժամային բնույթն ու այդ իրականության մեջ քնարական «ես»-ի մարդկային կեցության գոյաբանական խնդիրները:

4. Հ. Էդոյանի պոեզիայում քնարական «ես»-ի կերպավորման էական միջոցներ են նաև մեր կողմից ուսումնասիրված արքետիպերի ու միֆակիրառման առանձնահատկությունները: Ավանդական հնագույն պատկերներին, մոտիվներին ու սյուժեներին անդրադառնալն ու դրանց հայեցակարգերի բանաստեղծական համադրումը, վերաիմաստավորումն ու փոխակերպումը հեղինակային միֆաստեղծման համար յուրօրինակ հիմք են, արդյունքում արտաժամանակային իրողությունները բանաստեղծական տարածության մեջ արդիական երանգավորումներ են ձեռք բերում՝ սահմանակցելով անժամանակայինն ու գոյաբանականը, այն տանելով սկզբների սկիզբ, վերարթնացնելով հնագույն միֆական-արքետիպական աշխարհընկալման զգացողությունը և բանաստեղծական ապրումը հասցնելով արքետիպական մակարդակ:

5. Աստվածաշնչյան «միֆը»՝ որպես իմաստային-կառուցվածքային ամբողջություն, ինչպես նաև սրբազան խորհրդանիշները, պատկերներն ու մոտիվներն իրենց ներիմաստներով արմատավորվելով Հ. Էդոյանի բանաստեղծական տեքստի տարբեր մակարդակներում (այն է՝ կոմպոզիցիոն-սյու-

ժետային, իմաստային, հոգեբանական և այլն)՝ տարիմաստ գաղափարական-գեղարվեստական գործառույթ են իրականացնում: Բանաստեղծական տեքստում դրված այս կամ այն հարցի որոնումներում հեղինակը հաճախ է անդրադառնում բիբլիական «միֆին»՝ սահմանելով այն որպես որոշակի մեկնության դաշտ, որի արդյունքում բանաստեղծական տեքստում հիմնական տեքստը մշտապես փոխհարաբերակցվում է նախասկզբնական տեքստի (սրբազան տեքստի) առանձին խորհրդանշական պատկերների, իմաստների, ինչպես նաև ամբողջական պարբերության հետ, որոնք, միաձուլվելով հիմնական տեքստին (բանաստեղծական տեքստին), յուրահատուկ փոխհարաբերակցություն են ստեղծում՝ զարգացնելով-առաջ բերելով նորանոր իմաստներ: Տարբեր թեմաներով բանաստեղծություններում երևան է բերված ոչ միայն նորկտակարանյան սյուժեների և պատկերների հեղինակային «մոդիֆիկացիան», այլև ակներև են հեղինակային մեկնաբանությունը, ավանդական սյուժեների արդիական իմաստավորումը:

6. Ատենախոսության մեջ փորձ է արվել համաշխարհային և հայ կրոնամշակութային ավանդական պատկերացումների դիտանկյունից բացահայտելու Հ. Էդոյանի պոեզիայում հաճախ հանդիպող կյանքի և մահվան թեմայով գրված բանաստեղծությունների էությունը, բովանդակային յուրակերպությունը: Կյանքի և մահվան հավերժական թեման տարաբնույթ ձևակերպումներով հաճախադեպ է հայ և համաշխարհային քնարերգության մեջ: Սակայն ի տարբերություն այլ բանաստեղծների՝ Հ. Էդոյանը, վերաիմաստավորելով համաշխարհային կրոնների հավերժական Էությունը, կյանքի ու մահվան մասին ավանդական պատկերացումները, ընդլայնում ու հարստացնում է կյանքի, մահվան ու անմահության մասին փիլիսոփայական մտորումները, հաստատում մահվան չգոյությունն ու հավիտենական կյանքը, որը բանաստեղծական տեքստում ընկալվում է որպես գիտակցված ճշմարտություն՝ նոր իմաստ ու նոր գեղարվեստական երանգավորում հաղորդելով բանաստեղծությանը: Ասվածն առավել ակնհայտ ու արտահայտիչ է դառնում տարբեր պատմական ժամանակաշրջանների տարբեր հեղինակների ստեղծագործությունների հետ համեմատելու դեպքում (Ե. Չարենց, Վ. Տերյան և ուրիշներ): Քնարական «ես»-ի աշխարհընկալման մեջ քրիստոնեական ու արևելյան կրոնական-փիլիսոփայական ընկալումների համադրումները Հ. Էդոյանի ողջ ստեղծագործական արվեստի անքակտելի մասն են կազմում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԵՆ ՀԵՏԵՎՅԱԼ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐՈՒՄ

1. **Զաքարյան Հ.,** Քաղաքի տարածական մոտիվը Հենրիկ Էդոյանի պոեզիայում // Գիտական Արցախ, № 1(2), Եր., 2019, 292-298:
2. **Զաքարյան Հ.,** Կենսագրական և վերապրումի հիշողության հարաբերակցության խնդիրները (Հ. Էդոյանի պոեզիայի օրինակով) // «Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն», 2019 № 2 (29) էջ 69-80:
3. **Զաքարյան Հ.,** Հեղինակային «Ես»-ին բնորոշ դերանվանական ձևերը Հենրիկ Էդոյանի պոեզիայում // Հայագիտական հանդես № 2 (44), 2019, էջ 115-124:
4. **Զաքարյան Հ.**, Խոսքի երաժշտությունը Հենրիկ Էդոյանի բանաստեղծական աշխարհում // Երաժշտական Հայաստան, № 1 (56), 2019, էջ 49-53:
5. **Zakaryan H.** Some Details of Henrik Edoyan's Thinking within the Context of the Mythological-Poetic Approach // Review of Armenian Studies, (3) 2019, pp. 202-211.
6. **Զաքարյան Հ.**, Քրիստոնեական մոտիվներն ու խորհրդանիշները Հենրիկ Էդոյանի պոեզիայում // Հայագիտական հանդես № 2 (47), 2020, էջ 104-116:
7. **Զաքարյան Հ.,** Կյանքի եվ մահվան իմացաբանական հիմնախնդիրները Հենրիկ Էդոյանի պոեզիայում // «ՎԷՄ» համահայկական հանդես, ԺԲ (ԺԸ) տարի, թիվ 3 (71), հուլիս-սեպտեմբեր 2020, էջ 162-186:
8. **Զաքարյան Հ.,** Հենրիկ Էդոյանի միֆապոետիկան արդի հայ պոետական մտքի գեղարվեստական-գաղափարական որոնումների համատեքստում // Հայագիտական հանդես № 2 (51), 2021, էջ 132-143:
9. **Զաքարյան Հ.,** Կոլեկտիվ անգիտակցականի արքետիպական պատկերները Հենրիկ Էդոյանի պոետական աշխարհում // «Լրաբեր հասարակական գիտությունների», № 1 (661), հունվար-ապրիլ, 2021, էջ 158-170:

ЗАКАРЯН РИПСИМЕ АРАЕВНА

ПРОБЛЕМЫ ТРАДИЦИИ И НОВАТОРСТВА В ПОЭЗИИ ГЕНРИКА ЭДОЯНА

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10.01.02-«Армянская литература новейшего периода».

Зашита диссертации состоится 29 апреля 2022 года, в 12:30 часов на заседании специализированного совета ВАК 003 по специальности «Литературоведение» при Институте литературы имени М. Абегяна ННА РА (по адресу: Ереван, ул. Григора Лусаворича 15).

Диссертация может быть найдена в библиотеке Института литературы имени М. Абегяна.

РЕЗЮМЕ

Материалом диссертации является изучение особенностей традиции и новаторских проблем в поэзии армянского поэта 1960-х гг. Генрика Эдояна.

Актуальность темы обусловлена тем, что в данной диссертации впервые делается попытка всестороннего и всеобъемлющего анализа новаторского характера поэзии Г. Эдояна, структурных особенностей макротекстов и микротекстов его поэтического текста на уровне актуальных теоретических задач.

Структура диссертации: введение, три главы с соответствующими подразделами и выводами, заключение, список использованной литературы.

Во **введении** определяется главная цель и задачи исследования, его актуальность, научная новизна и значимость, степень разработанности темы и методологические основы исследования, а также представлена структура диссертации.

Первая глава носит название **«Поэтическое искусство Генрика Эдояна и литературные движения 1960-1970-х годов 20-го века. Традиции и инновации».** В первой части главы – *«Литературный процесс в Армении в 1960-1970 гг. и его влияние на формирование творческой личности Генрика Эдояна»* – анализируются особенности литературного процесса, развернувшегося в Армении во второй половине 20-го века. В этом контексте мы попытались в общих чертах представить литературные ориентиры и пути становления поэтического искусства Г. Эдояна. В той же главе в отдельном части под названием *«Тематика и поэтика стихотворных циклов»* анализируются особенности тематики, своеобразие творческих представлений и другие общие и важные особенности стихотворных циклов поэта, от первого сборника «Обращения» (1977) до последнего «Элегические размышления» (2019). В последующих подразделах главы – *«Поэти-*

ческая ситуация в 1960-80 годы и проблемы лирического героя», «Феномен свободного стиха (верлибра). Ритмические и интонационные особенности», ««Городской текст» и особенности его осмысления» предметом нашего рассмотрения стали значимые особенности поэтической формы, стиля, поэтики с выделением их традиционных и инновационных проявлений и учетом исторического контекста и теоретических основ.

Вторая глава, которая называется **«Новое применение архетипов и мифов в поэзии Генрика Эдояна»**, в свою очередь, состоит из двух структурных частей: «*Значение коллективного бессознательного и переосмысление его архетипов»* и «*Особенности мышления Г. Эдояна в контекте мифопоэтического подхода*». В первой части путем анализа отдельных поэтических образов с опорой на теоретию архетипов мы попытались выявить разнообразные связи поэзии Г. Эдояна с национальными и общечеловеческими ценностями, рассматривая их в этом контексте как органическое целое, а лирическое «я» как осознание единства субъективного и собирательного. Во второй части, носящей название «*Особенности мышления Г. Эдояна в контекте мифопоэтического подхода»*, рассматриваются особенности мифопоэтических произведений писателя. Генрих Эдоян, создавая уникальную мифопоэтическую систему ценностей, любое событие воспринимает с точки зрения собственного восприятия сотворения мира. Миф как составной элемент художественного мира интерпретируется с учётом разных аспектов и связан с теми источниками, к которым обращался поэт.

Третья глава исследования, носящая название **«Поэтическая метафизика Генрика Эдояна в контексте духовно-культурных традиций»,** состоит из двух структурных частей: *«Особенности поэтического представления античных, средневековых и библейских традиций»* и *«Гносеологические проблемы жизни и смерти»,* в которых, по сути, предпринимается попытка выделить и выявить наиболее метафизически значимые особенности поэзии Г. Эдояна, а именно: духовный характер стихотворения, онтологические, трансцедентальные, танатологические, имплицитные смыслы, которые вскрывают невидимые слои духовно-онтологических явлений. В первой структурной части третьей главы диссертации наше внимание сосредоточено на особенностях произведений Г. Эдояна, построенных на христианских мотивах и символике, в частности стихотворений-молитв, представляющих особый интерес с позиции восприятия христианских принципов.

В последней части главы под названием *«Гносеологические проблемы жизни и смерти»* кратко определяется эволюция восприятия жизни и смерти, его проявления в разные периоды времени. По мере необходимости проводя параллели с аналогичными, на первый взгляд, характеристиками, мы попытались подчеркнуть уникальность эдояновского поэтического искусства, опираясь на различные исторические и современные философские концепции, религиозно-философские учения и пр.

В **заключении** обобщены основные результаты научного исследования.

HRIPSIME ARA ZAKARYAN

PROBLEMS OF TRADITION AND INNOVATION IN HENRIK EDOYAN'S POETRY

The abstract of the thesis for the scientific degree of the Candidater of Philology in the speciality 10.01.02 " The modern era of Armenian literature".

The defence is going to be held on 29 April, 2021, 12:30 p.m. in a spesialized council 003 of Higher Attestation Commission acting at the institute of Literature after M. Abeghyan. Address: Grigor Lusavorich 15, Yerevan.

The dessertation can be found in the library of the institute of Literature after M. Abeghyan.

SUMMARY

The subject of the dissertation is the study of peculiarities of tradition and innovation problems in the poetry of the Armenian poet Henrik Edoyan, who entered the arena in the 1960s.

The relevance of the topic is due to the fact that with this disseration for the first time an attempt is made to define by a comprehensive and in-depth analysis the innovative nature of H. Edoyan's poetry, the structural pecualarities of macro- and micro-texts of his poetic text at the level of contemporary theoretical problems.

The dissertation consists of an introduction, three chapters with corresponding subsections, conclusions and a list of used literature.

The introduction defines the main purpose and objectives of the dissertation, its relevance, scientific novelty and usefulness, the degree of topic elaboration and the methodological bases of the research, including the structure of the dissertation.

The first chapter is titled as "**Henrik Edoyan's poetic art and the literary shifts of the 1960s-1970s. Traditions and Innovations**", in the first subtitle of which - "*Literary Process in Armenia in the 1960s-1970s of the 20th century and its influence on Edoyan's creative personality formation*", are examined the literary processes unfolding in Armenia in the second half of the 20th century, in the 1960s and 1970s. In that context, we have attempted to highlight with general characteristics H. Edoyan's literary positions and the path of origin of his poetic art. In the same chapter, with a separate subtitle "*Thematic-poetics of poetic series*", is observed the direction of movement from H. Edoyan's first collection, Reflections (1977) to the last, Elegic Reflections (2019): the theme, the originality of the development of thinking and other important general features. In other subheadings: "*The poetic situation in the 1960s-1980s; the problems of the lyrical hero*", "*The phenomenon of free poetry (verlibre), "Rhythmic-intonation features*", "*Urban text" and the peculiarities of its meaning*" we have examined the essential features of the poetic form, style, theme and

poetics, emphasizing the traditional-innovative manifestations, taking into account the historical context, theoretical bases.

The second chapter, which is titled as **"The application of archetypes and myths in a new way in Henrik Edoyan's poetry"**, in its turn, consists of two sub-chapters: "*The meaning of the collective unconscious and the rethinking of its archetypes*" and "*Peculiarities of H. Edoyan's thinking in the context of the mythological-creative approach*". In the first subchapter, through the analysis of separate poetic images, through theoretical (archetype theory) substantiations we tried to identify the various relations of H. Edoyan's poetry to national and universal qualities, viewing it in that context as an organic whole, and the lyrical "I" as a consciousness with subjective and collective psychology. Second, under the subheading "*The peculiarities of Henrik Edoyan's thinking in the context of the mythological-creative approach*" are considered the peculiarities of the writer's mythopoeic works. H. Edoyan, by creating a unique mythological-creative value system, perceives each event from his own point of view on world creation. Myth, as an integral element of the art world, is viewed from different angles, and is connected to the sources which the poet has referred to

"**Henrik Edoyan's poetic metaphysics in the context of spiritual-cultural traditions**" is the title of the third chapter of our study, which in turn consists of two sub-chapters: "*Peculiarities of poetic depiction of ancient, medieval and biblical traditions*", "*The epistemological problems of life and death*", in which, in essence, an attempt is made to separate and reveal the most important layers emphasized by the metaphysical nature of H. Edoyan's poetry, the peculiarities of the concepts that the term metaphysics includes, that is, the spiritual nature of the poem, the ontological, transcendental, Thanatological meanings, which reveal the invisible layers of the spiritual-ontological phenomena. At the core of the study of the dissertation's first sub-chapter of the third chapter are H. Edoyan's poems written with Christian motives and symbols, as well as the peculiarities of prayer-poems, especially in terms of understanding Christian principles.

In the last subchapter titled "*The epistemological problems of life and death*", we also first briefly defined the evolution of life and death perceptions, their manifestations at different times. As needed, we tried to emphasize the uniqueness of Edoyan's poetic art with parallel comparisons of seemingly similar qualities, based on various historical and modern philosophical concepts, religious-philosophical teachings, etc.

In the section of **Conclusion** I've summarized all main and essential results that have been generalized during the scientific research due to modern attitudes.